# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Արմավիրի մարզի /Վաղարշապատի/

## Այգեշատ համայնքի

## Ղեկավարի 2011թ-ի կիսամյակային

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ 2011թ-ի կիսամյակի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվել է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու գողությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում :

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն և շաբաթական մեկ անգամ կատարվում է աղբաթափություն:

Ավագանու հաստատմամբ սոցիալական օգնություն է տրվել համայնքի թվով 9 առավել անապահով ընտանիքներին:

Տարեսկզբին ամանորի գիշերը ղեկավարի և աշխատակազմի աջակցությամբ համայնքի երեխաներին իր նվերներով իրենց տներն է այցելել ձմեռպապը: Փետրվար ամսինն Տյարնընդառաջի տոնի կապակցությամբ համայնքի թվով 22 նորապսակների ներկայությամբ կազմակերպվել է միջոցառում:

Միջոցառումը տեղի է ունեցել համայնքի կենտրոնում՝ եկեղեցում տեղի ունեցավ նորապսակների օրհնության արարողությունը այնուհետև կրակ վառվեց համայնքի կենտրոնում և շարունակվեց արարողությունը, որը կազմակերպվել էր ղեկավարի և աշխատակազմի համայնքի բյուջեի կողմից:

Միջոցառմանը ներկա էին հեռուստաընկերության լրագրողները, որը նկարահանվեց հաղորդաշար և ցուցադրվեց կենտրոն հեռուստաընկերությունով և ունեցանք բավականին դրական արձագանքներ թե հանրապետությունում՝ և դրսում:

Մարտի 8-ի և ապրիլի 7-ի կանանց տոնի առթիվ ույնպես կազմակերպվեցին միջոցառումներ: Մայիսի 9-ի հաղթանակի տոնի կապակցությամբ ղեկավարը կազմակերպեց միջոցառում և պատերազմի մասնակից վետերաններին դրամական պարգև շնորհեց:

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2011թ-ի գարնանային զորակոչի համար ավտոդպրոցում նախապատրաստվել և զորակոչվել են երեք զորակոչիկ, և մեկնել են զինծառայության: 2011թ-ի գարնանային զորակոչի պլանը կատարվել է 100%-ով:

Հաշվետու տարում համայնքում կատարվել է կենդանիների համաճարակային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբաղի և բրոցիլոզի դեմ: Աշխատանքներ են կատարվել Վաղարշապատի ՋՕՄ-ի հետ համայնքի Ուրց-Կոտայք Շամիրամ գոտուց օգտվող ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար:

Համայնքում գտնվող 2 բնակչին կարևոր կամուրջներ որից մեկը հանդամիջյան ճանապարհին էգտնվում իսկ մյուսը գերեզման տանող ճանապարհին գտնվում էին քանդված և անտեսված վիճակում ղեկավարի միջնորդությամբ այժմ 2 կամուրջներն վերանորոգվել են և գտնվում են ամուր և կայուն վիճակում:

<<Մուսալեռ>> մասնաճյուղ <<Էջմիածին>> էլցանցի հետ համատեղ կատարել են վթարային էլեկտրասյուները նորերով փոխարինելու աշխատանքները: Ղեկավարը կազմակերպում է բնակիչների ընդունելություն և աջակցում նրանց խնդիրներին: Շարունակվում է համայնքի բուժկետի կառուցման աշխատանքները, որը որ կատարվում է բյուջեի միջոցներով: Մարզպետի աջակցությամբ մեր համայնքի բնակիչներին գարնան ամիսներին տրամադրվել է կրծողների դեմ թույն:

Ի շնորհիվ մարզպետի մեր համայնքում թույնի բաժանումը կատարվել է կրկնակի ինչի համար խորհին շնորհակալություն ենք հայտնում մարզպետին:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկտեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչնդոտում են գյուղատնտեսության զարգացմանը:

Առ. 01.07.2011թ-ի դրությամբ բյուջեն կատարվել է 37.94 -ով

| | |
|---|---|
| հողի հարկ ------8000.0 | կատարողական----1066.6 |
| գույքահարկ------1606.0 | կատարողական-----396.0 |
| շինություն------409,9 | կատարողական-----85.6 |
| փոխադրամիջոց-----1200.0 | կատարողական---310.7 |
| վարձակալական հողերի վարձ------500 | կատարողական---432.7 |

Այգեշատի գյուղապետարանի

առաջատար մասնագետ՝ Գայանե Մկրտչյան

Այգեշատ համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Հովսեփյան